

ԴՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒՅՐՅԱՆ՝¹⁾

(1826—1827 թ. բ. ուս պարսկական պատրազմի հերոսներից)

Ամեն անգամ, երբ թշնամին դիմելով
խարերայության խախտում է մեզ՝ հաս-
ունեցած պարմաներն ու դաշնքը և հան-
կարծակի մտնում մեր երկրի սահմաննե-
րը, ժողովուրդն իրո՞ւ մի անսպառ աղ-
բյուր իր ծոցից հանում է այսպիսի հե-
րոսներ, որոնք գուցե ուրիշ խաղաղ պայ-
մաններում շնորհիվ իրենց ընտրած հա-
սարակական ասպարեզի մասին անհայտու-
թյան մեջ. միայն Հայրենիքին սպառնա-
ցող վտանգն է ստիպում այդպիսիներին
թողնել իրենց հանդիս կյանքը և դուրս
դալ հանդուզն թշնամու դեմ:

Այդպիսի հերոսների շարքին է պատ-
կանում 1826—1827 թ. թ. ոռու-պարսկա-
կան պատերազմի ժողովրդական հերոս
Գրիգոր Եպիսկոպոս Մանուչարյանը:

Շամշադինի շրջանում Հասանու գե-
տակի ձախ ափից ոչ հեռու գտնվում է
պատմական Նոր Վարագա վանքը: Գետա-
կի աջ ափի բարձրության վրա տեղավոր-
ված է Հայում դյուդը, որը ժողովրդի
մեջ հայտնի էր «Վարդապետի դյուդ» ա-
նոնով, որովհետև այլ գյուղումն էր
ծնվել ու մեծացել Գրիգոր Եպիսկոպոս Մա-
նուչարյանը, Նոր Վարագա վանքի նորո-
դողը և նրա վերջին վանաձայրը: Գրիգոր
Եպիսկոպոս Մանուչարյանը հետագայում
իր քաջազրութություններով անուն հան-
լով, «աչքի ընկնող աեղ է բոնում առա-

պարսկական պատմազմի ժողովրդական
հերոսների շարքում: Ժամանակի ուսա-
կան զինվորական տարեղորությունները
շատ դեպքեր են պատմում այդ հոգեւորա-
կանի հանդուզն ու համարձակ քաջազր-
ծությունների մասին, որոնք հետազարմ
նյութ են սովոր զինվորական տարեղոր-
վությունների մասին, որոնք հետազարմ
սանդր երեցյանի՝ Մանուչարյանին նվիր-
ված մոնղոլաֆիի աշխատություններին:

Ղազախը և Շամշադինը Համարվում
են անհանգիստ շրջաններ ուսական կա-
ռավարության համար: Պարակաստանի
հետ պատերազմի ժամանակ ուսական կա-
ռավարությունը պետք է լարեր իր ուշա-
գրությունը իր ծեռքում պահելու համար
շրջանները, որոնց հօկաններ տերերը հա-
մարվում էին ավագակաբարու բեկերը ու
աղալարները, որոնք անպատճե կերպով
ճորտացրել են կեղեցում էին տեղական
գյուղացիությանը: Առանձնապես ծանր էր
Հայ գյուղացիների դրությունը: Նույնիսկ
սուս-պարսկական պատերազմից հետո,
երբ ոռուական կառավարությունը որոշ
չափով զագել էր սահմանադակ բեկերի ու
աղալարների իշխանությունը, այդ շրջան-
ների գյուղացիության վիճակը ուսումնա-
սիրող առանձին հանձնարարությանց պաշ-
տոնյա Զուրաբյովը աթոռությանը ներկա-
յացրած իր պաշտոնական զեկուցման մեջ
դրում է. «Առանձնապես պետք է զարմա-
նալ, որ կառավարությանը հայատարիմ
հայերը, որոնք ավելի հակում ունեն դեպի
արհեսաները, երկրագործությունը և վա-
ճառականությունը, այս երկրում ազգա-

1) Այս ուսումնասիրությունը պատկանում է հանգուցյալ Ամբատ Տեր Այետիքյանին: Հոդվածը
խմբագրությանն արամակը Ակադեմիայի պատ-

բնակության ավելի գործունյա և օգտակար դասը հանդիսանալով հանդերձ՝ տեղի խոռվարար աղալարների ձեռքում գերի են. աղալարները նրանց դլավովին կողոպատում և թալանում են միայն այն պատճառով, որ նրանք նվիրված են ասւսական կառավարությանը...»¹⁾:

Եվ ամեն անգամ, երբ պարսկական դոքերը մոռանում էին այդ շրջաններին, տեղի աղալարները և բեկերը ապստամբության դրոշ բարձրացնելով ուստական կառավարության դեմ, ոկում էին ավերել և թալաններ հայ դյուլացիությանը, որը դուրկ մինելով ինքնապաշտպանության միջնոցներից, իր բոլոր հույսը դնում էր սակավաթիվ ուստա դոքերի վրա, իսկ սրանք դուրկ էին հայերին էական օկնություն դրույց տալու հնարավորությունից: Գուցե Շամշադինի հայերի այս անսպաշտպան դրությունն է ստիպում նոր Վարադա վանքի վանական համարայի Գրիգոր Մանուչարյանին կազմակերպել անդացի հայ դյուլացիությանը և պաշտպանել նրան աղալարների ու բեկերի այդ հարձակումներից:

Թե ե՞րբ է ծնվել Գրիգոր Մանուչարյանը, մեղ հայոնի չէ. բայց սկսած 1803 թվից, երբ Կովկասի կառավարչապետ իշխան Ցիցիանովը արշավում է Գանձակի խանության վրա, մինչև ուստապարսկական պատերազմի վերջը՝ 1827 թ., — երբ Շամշադինը մի քանի անգամ դառնում է պատերազմի թատերաբեմ, — ռուսական դինլորական տարեկրության մեջ իր զարժանալի, իր հանդուրզն քաջապործություններով շարունակ հանդես է դաշին Գրիգոր Կալիսկոսս Մանուչարյանը: «Գրիգոր եպիսկոպոսը», գրում է Երիցյանոր, «Շամշադինի և Ղազախի հայերից 500 կտրիճ երիտասարդների մի հեծնլազունդ էր կազմել և ինքը դարձել նրանց զնուապետը: Վեցաբր և հոգևորական տարապը ծանթը տանը, նա հագել էր շնականի չուփա,

ծածկել ոչխարի մեծ դափախը, կտպել թուրը և դաշույնը և հրացանը ձեռքին, սպիտակ նժույզի վրա նստած առաջնորդում էր իր գունդը թե Կանձակի և թե Երևանի վրա արշաված ժամանակ: Պարսից հեծելազորի հետ կոիվ սկսողը և ճակատահար լինողը միշտ Գրիգոր եպիսկոպոսն էր լինում իր կտրիճներով: Մարսափելի է դառնում այս հեղ և Համեստ հոգեւրականը պատերազմի դաշտում թուրը հանած միջոցին: Մինչև այսօր էլ ավանդաբար քաջապործությանց հրաշքներ են պատճում Մանուչարյանց Գրիգոր եպիսկոպոսի մասինք¹⁾:

Կովկասի կառավարչապետ իշխան Ցիցիանովը տեսնելով Մանուչարյանի քաջակործությունները պատերազմի դաշտում նրա կրծքին կախեց Ս. Գևորգի չորրորդ աստիճանի խաչը, որը արվում էր առանձնահատուկ աչքի լոկոնդ քաջապործությունների համար, և նշանակեց 300 ոռութիւն մշատկան թոշակ: Ցիցիանովի հաջորդ կոմս Գուտուլիքը 1808 թվին Երևանի վրա արշավելու ժամանակ հետո տարավ Մանուչարյանին իր դաշտախցի ձիավորներով: Այսեղ Նախիջևանը դրակելիս Մանուչարյանը մեծ կոտորած պատճառեց պարսիկներին և թշնամու արյան մեջ շաղախած ինքն էլ վերք ստացավ ու հազիվ ազատվեց մաշեց: Գուտուլիքի միջնորդությամբ Ալեքսանդր առաջին կայսրը այս քաջապործությունների համար առանձին հրովարտակով Մանուչարյանին արժանացրեց Վլադիմիրի և Ամենայի շքանշանների և 300 ոռութիւն փոխարեն 600 ռ. թոշակ նշանակեց:

Մրանից հետո մինչև 1826 թիվը, երբ պարսիկները առանց պատերազմ հայտարարելու ներս խուժեցին մեր սահմանները, Մանուչարյանը քաշլում է նոր Վարադա վանքը և առանձնացած կյանք վա-

1) Акты Кавказской археографической комиссии, том VII, стр. 35.

1) Ա. Երիցյան—Ամենայն Հայոց կաթողիոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, Մահնկլ. Թիֆլիս, 1894 թ., էջ 248—244.

բում: Թայց երբ լուսմ էր, որ ավազակները քչել են հայ դրուղացիների տավաշը (որ այն ժամանակ սովորական երևութէր) կամ մարդ են սպանել, նա նորից գեղարը փոխում էր փափախի ու զինվելով ընկնում ալարտակների հետեից և սարսահաճար անում նրանց:

Հայտնի է, որ Եփրեմ կաթողիկոսը նեղացած Երևանի սարդարի բնությունից և պարսիկ պարտասերերի անիրավականանջներից, 1821 թ. ճամապարհ է ընկնում էջմիածնից և Նախիջևանի վրայով մտնում ոռւսաց սահմանը, հասնում Շուշի: Կովկասի կառավարչապետ հայտնի Երմոլովը քաղաքական բարդություններից խուսափելով՝ կաթողիկոսին խորհուրդ է տալիս հրաժարվել իր կոչումից և առանձնանալ Հախապատի վահքում: Եփրեմ կաթողիկոսը այստեղ ապրում է մինչև 1826 թ. օգոստոս ամիսը: Երբ սկսվում է ոռւսականական պատերազմը, Թիֆլիսում հայերը երկուող են կրում, որ պարսիկները կարող են հարձակվել Հախապատի վրա և զերի վերցնել Եփրեմ կաթողիկոսին: Պետք էր նրան Հախապատից փոխադրել, բայց դա այնքան էլ հեշտ բան չէր, որովհետեւ պարսից հեծելազորի առանձին խըլքերը անցնելով ոռւսաց սահմանը՝ Լոռու ձորով իջել էին Բորչալուրի դաշտը և միացել տեղի ապստամբ աղալարների հրոսակների հետ ու կտրել բոլոր ճանապարհները: Այսպիսի մի դժվար ժամանակ Թիֆլիսի թիվնի առաջնորդ հայունի Ներսես Աշտարակցին արդ գործը հանձնում է Գրիգոր Խափակոսոս Մանուչարյանին: Վերջինս 40 ձիավորով՝ 1826 թ. օպոստոսի թիվն հասնելով Հախապատի վահքը, վերցնում է ծերունի Եփրեմ կաթողիկոսին և ոլոր-մոլոր ճանապարհներով իջնում Բորչալուրի դաշտը. այստեղ Խրամ դևուի մոտ նրանք հանդիպում են 300 հոգուց բազիցաց պարսիկ հեծելազորի: Սկսվում է կատաղի կոփը: Մանուչարյանը սուրբ ձեռքին ճանապարհ է բաց անում, հետեւ առաջարկում ծերունի կաթո-

ղիկոսին: Ականատեսները պատեմում են, որ կտյին ըրպեհներ, երբ թվում էր, թե այլեւ աղասիվելու հույս չկար: Կոմի ժամանակ սպանվում է Մանուչարյանի ձիռ, բայց նա մի ուրիշ ձի նոտելով և ճեղքելով թշնամիների գունդը, աղասում է կաթողիկոսին և հասցնում Թիֆլիս: Մանուչարյանի իմրեից 9-ը հոգի ընկնում են պատերազմում, բայց կոփը չառ թանդ է նոտում պարսիկներին:

1826 թվին պարսիկների հանկարծակի հարձակումը անսպասելի էր Խուսաստանի համար, որը խաղաղություն պահպանելու նպատակով զեսպանություն էր ուղարկում շահի մատ, բայց ոռւսական դեսպան Մենչիկովը վեռ չվերապարձած, պարսիկները սերս ևն խուժում մեր սահմանները: 1826 թ. հուլիսի 16-ին Երևանի սարդարի եղբայրը Հասան Խանի կորպերը թափվեցին Փամբակի և Շորագյալի սահմանապահ սակալաթիվ սուս զորքերի վրա, որոնք մեծ մասամբ տեղափորված էին հայ գլուղերում. զինվորների հետ միասին հայ գլուղացիներն էլ զարմանալի կերպով զեմագործ են պարսիկներին: Միաժամանակ պարսից դիմավորը բանակը, որի թիվը հանում էր 60.000-ի, թաղաժառանչ Արքաս Միրզայի առաջնորդությամբ մտավ Դարբարդ: Պարսից զորքերը երևանալի ուսքի հանեց Անդրկովկասի նոր նվաճած քավառները: Այս ծանր բոպեին ամբողջ Անդրկովկասում սուսներն ունեին ընդամենը մոտ 35.000 զորք, որոնք ցրված էին կասպից ծովից մինչև Սև ծովը, պահում էին քաղաքները, ամրոցները և սահմանները: Երկիրի պաշտպանության համար կառավարչական Երևությունը թիֆլիսում զինվորական խորհրդիրի է հրավիրում նաև հայերի նեկայացուցիչներին, որից հետո նա ուխմում է Եփրեմ կաթողիկոսին, խնդրելով ապատամբներին զապելու համար Շամշադեին ուղարկել Պրիորոր ճպիսկոպոս Մանուչարյանին: Գրիգոր Խափակոպոս Մանուչարյանը իր խմբով կարճ ժամանակում զապում է Ղաղախի և Շամշադեինի ապշ-

տամբներին, հետ է քշում պարսկական հրոսակներին, որոնք ձգուում էին թալանել զյուղերը և բնակիչներին գերի տառնել: Նա խլում և իրենց զյուղերն է վերադարձնում 1000 տուն թուրք զյուղացիների, որոնք ապօտամբ աղալարների թելադրությամբ թողնելով իրենց տունն ու տեղը, անցնում էին Պարսկաստան: Մանուշարյանը պահպանում է ճանապարհները, ամեն տեղ պահպաներ նշանակելով, նա մի քանի անգամ սովից ազատում է ուստի բանակը իր և մյուս հայերի տներից պաշար հավաքելով զորքի համար: Համաձայն պաշտօնական արխիվային նյութերի՝ ամենավտանգավոր ժամանակ, երբ կարիք էր լինում, ուստի բանակի կարեռը գրությունները Մանուշարյանը ինքն էր անձամբ տանում թիֆլիս Երմոլովին կամ ուղարկում իր եղբոր միջոցով: Մանուշարյանի եղբայրը անձնական քաջությամբ հետ չէր մնում նրանից: Հախում դյուզում պատմում են, որ մի օր Մանուշարյանի եղբայրը, երբ ձի հեծած մի շատ կարեռը տեղեկություն էր տանում Երմոլովին, նրան շրջապատում է պարսից հեծելագործ: Մանուշարյանի եղբայրը գերմադրություն ցույց տալուց հետո, երբ տեսնում է, որ ինքը չորս կողմից շրջապատված է և փրկություն չունի, ձիով թռչուած է գեղակի կողքի անդունիքը: Նրա ձին փշրվում է, իսկ ինքը անվտանգ պատվելով շարունակում է ճանապարհը: Այն ժամանակ, երբ ողարսիկները շարունակում էին թալարները և բնակչությունը անցնում էր անձնական անդամականության մեջ, որը մասնաւությունը ապօտամբ էր աղալար և բեղ կոչված աղնվականները անիրավարաց տիրանան հայ գյուղերին և նրանց հողերին, իսկ ծանր հարկեր առնելով կեղեցն հայ գյուղացիությանը, և այդ էլ այժմ, երբ վերջ է դրվել պարսկական բռնություններին և երկիրը անցել է ուստի բանական իշխանությանը: Մանուշարյանը ինդրում է Երմոլովին իրեւ վարձատրություն ոչ միայն Շամշադինի, այլև մյուս թուրքաբնակ գալառների հայ գյուղերը աղատել աղալարների և բեկերի բռնությունից և այդ գյուղերը հայուրարել արքունական: Այս մտքով էլ նա մի գրավոր տեղեկագիր է ներկայացնում Երմոլովին, որին վերջինս 1826 թ. հոկտեմբերի 1-ին պատասխանում է հետևյալ գրությամբ, որը մենք ամբողջովին առաջ ենք բերում հին թարդմանությամբ: «Սրբազն հայոց Գրիգոր արքեպիսկոպոս հայոց, ողորմած տեր. ըստ վկայության Վրաստանի հայոց առաջնորդի՝ ձեր սրբազնության ջերմեռանդ ծառայության մասին առ պետությունն, ուրին օգտագետ լինելու մշտական պատրաստությունն էր հայոնած, ևս հրավիրեցին Զեղ Երթալ Շամշադինի գալառակը, ուր տեղի բնակիչները պարսից թելադրությամբ վրավիման մեջ էին, իսկ թուրք տանուտերներն էլ մեծ մասամբ մեզ դաշտանեցին: Գիտենալով, որ ժողովուրդը ընդհանրապես ձեր սրբազնությանը հարգում է և հավատ է ընծայում, ես խընդ-

տամբ աղալարներին և կարգը վերահաստատում: Երմոլովը անձամբ տեսնելով Մանուշարյանի քաջուղությունները և բարձր գնահատությով սուսական բանակի մատուցած նրա ծառայությունները, դրկում է նրան և խնդրում ասել, թե ինչ չո՞վ կարող է նորհակարաւթյուն հարսնել նրա օգնության փոխարևն: Մանուշարյանը պատասխանում է, որ ինքը անձամբ իրեւ հոգերական ոչ մի բանի կարուտ չէ, բայց անօրենություն է համարում, որ թուրք աղալար և բեղ կոչված աղնվականները անիրավարաց տիրանան հայ գյուղերին և նրանց հողերին, իսկ ծանր հարկեր առնելով կեղեցն հայ գյուղացիությանը, և այդ էլ այժմ, երբ վերջ է դրվել պարսկական բռնություններին, ուրին վերջինս 1826 թ. հոկտեմբերի 1-ին պատասխանում է հետևյալ գրությամբ, որը մենք ամբողջովին առաջ ենք բերում հին թարդմանությամբ: «Սրբազն հայոց Գրիգոր արքեպիսկոպոս հայոց, ողորմած տեր. ըստ վկայության Վրաստանի հայոց առաջնորդի՝ ձեր սրբազնության ջերմեռանդ ծառայության մասին առ պետությունն, ուրին օգտագետ լինելու մշտական պատրաստությունն էր հայոնած, ևս հրավիրեցին Զեղ Երթալ Շամշադինի գալառակը, ուր տեղի բնակիչները պարսից թելադրությամբ վրավիման մեջ էին, իսկ թուրք տանուտերներն էլ մեծ մասամբ մեզ դաշտանեցին: Գիտենալով, որ ժողովուրդը ընդհանրապես ձեր սրբազնությանը հարգում է և հավատ է ընծայում, ես խընդ-

դրեցի ձեզ խաղաղացնել բնակիչներին, որպեսզի նրանք իրենց միամտությամբ չէնտելին ուխտագրութիւնը ինքնին։ Դուք, ի կատարյալ բավականություն իմ բոլորովին արդարացրիք ձեր առաջնորդ-հովվապետի թե ընտրությունը և թե ձեր մասին ունեցած բարի կարծիքը։ Ձեր անձը վտանգի ննիթարկելով, Դուք սակավաթիվ մարդկանցով դիմադրեցիք ասպասմբներին, քչելու, արտասահման տանելու հայ գերդաստանները։ Առհասարակ, Դուք ամեն կերպ օգնում էիք երկրի գլխավոր վերակացու, իշխան թարիսանովին տերության կամքը կատարելու։

«Զորաց բանակի հետ զալով Հասանուու, ևս ինքու վկա եղա ձեր գովելի գործերին, վասն որո սուրբ պարտք եմ համարում ինձ հայոնել ձերդ սրբազնության ի գիմաց տերության կատարյալ գոհունակություն։ Հաճելի է ինձ հուսալ, թե դուք այսուհետեւ ևս չեք դաշտարիլ պատրաստ լինելու հոգուու ծառայության թագավոր կայսեր։

«Հարգելով Ձեր ինձ մատուցած տեղեկագրի մեջ հայտնած մտքերը, ևս հրամանադրեցի Շամշադինի գլխավոր վերակացվին, որ նույն գավառակի հայերին բոլորովին ազատելով թուրք աղալարների իրավասությունից, արձանագրե նրանց որպես արքունի։ Իսկ ինչ որ կիբերաբեր բոլոր հայոց ընդհանուր կախումն ունենալուն մնացած թուրքաբնակ գավառներում, ևս այդ ևս անմիջապես կկարգադրեմ ի գիտություն ամենեցուն»։

Մասրագրած է Ալեքսեյ Երմալով¹⁾։

Մեր կարծիքով Մանուչարյանի ամենամեծ ծառայությունը, որը անբաժան է նրան գործած քաջադրություններից իրեւե ուսում-պարսկական պատճրազմների աչքի ընկնող հերոսի 1809 թ. սկսած մինչև 1827 թ., պետք է համարել հայ գյուղերի աղասահերելը աղալարների և բնիկերի ծանր իշխանությունից, որը կատարվեց նրա անմիջական մասնակցությամբ և միջնորդությամբ։

Երմոլովի՝ Կովկասից հեռանալուց հետո Մանուչարյանը շարունակում է իր աջակցությունը ուսուական բանակին նաև 1827 թ. մինչև ուսում-պարսկական պատճրազմի վերջը, երբ երկրի կառավարչապետ էր նշանակված դորապետ Պասկեվիչը։

Մանուչարյանի կատարած քաջագործություններն ատիպում են նույնիսկ Պասկեվիչին միջնորդել, որ Մանուչարյանը վարձատրվի ըստ արժանավույն։ Այլ միջնորդության համաձայն Գրիգոր Մանուչարյանը գալու գամանում է Հասանսու գետի ձորի գյուղերի և հողերի տերը, միաժամանակ երբեմ արքեպիսկոպոս իր անձի մեջ միացնելով թե հոգեոր և թե աշխարհային իշխանությունը։

Նախկին Հայուում գյուղի կենտրոնում կառուցված է վայրածածկ հողե կտուրով գյուղական եկեղեցին։ Իրա ներսում գտնվում է Գրիգոր Մանուչարյանի գերեզմանը։

¹⁾ Երիցյան Ա.-Ամեն. հայ. կաթող. և Կովկ. հայք XIX դարում, մասն. Ա., էջ 246—249,

